

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բայի կիրակի և առի օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր թաւին 2 կոպեկ.

ՄՇԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր վերջին խօսքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նմանակ. Թատրոնական ժողով. Նամակ Պետերբուրգից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միտքեր խորհրդարանի մասին. Պատգամատարի ծախսը.—ԽԱՌՆ ԼՈՒԻՐԻ.—ՀԵՌՈՒԳՈՒՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նկատողութիւններ.

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՄԲԸ

Կիսադաշտանական «Кавказ» լրագրին իր վերջին համարի առաջնորդողով պատասխանում է «Новое Обозрение» լրագրում տպված մարտի 8-ի ժողովի մասին մեր գրված յօդուածին:

«Кавказ» լրագրի խմբագիրն այն կարծիքի է, որ մենք համ պիտի բողոքէինք ժողովի ապօրինութեան դէմ, համ էլ մասնակցէինք ժողովին, քուէարկէինք ու քուէարկէինք... Այդ տեսակ տարօրինակ առաջարկութեան հետ մենք համաձայն չենք: Եթէ մենք ժողովը ապօրինի ենք համարել, այլ ևս մեզ ինչ հարկ կար մասնակցել այդ կատարելագոյն ապօրինի ժողովին: Ուստի լրագրին խմբագիրը նոր մարզ լինելով մեր երկրում, ծանօթ էլ չէ այն կուսակցութեան հետ, որի հետ մենք դժբաղդապես գործ ունենք. նա չը դիտէ թէ այդ մարզկանց համար չը կայ ոչ սրբութիւն, ոչ օրէնք, ոչ իրաւունք, ոչ լոգիկա, ոչ իրիդէ և ոչ անօթ: Նրանք անտես առնելով այն աղաղակող անիրաւութիւնը, որ մի ամբողջ եկեղեցու գոյութիւնը ջնջված է ընտրողական ցուցակներից, հանգիստ խղճով քուէարկում ու քուէարկում են,—իսկ եթէ մեզանից մէկն ընտրվէր այդ հանգամանքներում, նրանք ժողովի վերջանալուց յետոյ անմիջապէս օգուտ կը քաղէին մի եկեղեցու բացակայութեան հանգամանքից, որպէս ընտրութեան բեկման (կասասցիայի) պատրուակ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

IV.

Մենք տեսնք թէ ինչպէս անվախ մարդը, զինուորված առողջ ու գեղեցիկ մտքերով, յամառութեամբ առաջ է անում օրհասական մարտը ժամանակի փամօ, հոտած հոտանքների դէմ: Հետաքրքրական է իմանալ թէ ինչ ներքին հասկացողութիւն է այդպիսի մարդկանց այնքան քաջութիւն տալիս: Հաստ երկար բացատրութիւններ են հարկաւոր այդ հարցի ուսումնասիրութեան համար, բայց մենք կարծում ենք, որ կարճ ու գեղեցիկ մտածանքը տուէլ է իտալացի դիտմանական Պ. Մանտեգազայի հետեւեալ խօսքերը: Եւս որպէս թէ այժմ լսում եմ Աստուծո ձայնը, որ հեզաբար պատասխանում է նրան կանչող մարդուն.— ոչ, ես քեզ չեմ բեռնի ժայռի վրա և չեմ ուղարկել բաղէն, որ քո փորոսիքն ու թղթերը լայիկ. ես դեպի քեզ աւելի ներողամիտ կը լինեմ, քան դեպի Պրոմէթէոսը. ես քեզ կը տամ մի դանակ և դու յախտեան այդ դանակը քո ձեռքում կը պահես: Դա—սպանութեան դէնք չէ, այլ մի գործիք, որ անհրաժեշտ է ճշմարտութիւնը փրկողուն համար: Դու ուղղում եմ թիֆլիսցիներին իրենց գաղափարի մէջ: Լաւ, ուրեմն մտիկ այնտեղ դանակի օգնութեամբ: Դու ուղղում եմ միլանցիներին ամեն մի հիւսուածքի, այնքան մի կաթիլի մէջ կեանքի պատճառը գտնել: Լաւ.—կարծիք: Քըրքը ի ի մ'աջի իր» (П. Мантегаца—«Экстазы человека»):

կից և իրանց մէջը յանկարծ դարձնելով դէպի թեմական առաջնորդն ու երեսը դէպի Եջմիածին սինօդը, կը յայտնէին որ ժողովը անվաւեր է եղել, քանի որ մի ամբողջ հայոց եկեղեցու հարիւրաւոր ծխականների ներկայացուցիչները չեն մասնակցել ընտրութեան գործին... Բայց քանի որ իրանք են ընտրվում՝ փոյթ չէ որ այդ եկեղեցական հարիւրաւոր ծխականների ընտրողական ձայնը խեղդված է, փոյթ չէ որ ընտրողական դաշխնում 153 ծխականների կողմից ընտրվածների փոխարէն, փառաբար կերպով բազմեց են 18 մարդկանց ընտրվածները, փոյթ չէ որ կուսակցութեան միջոցով ընտրվածները անգ, մասնակցում են ընտրութեան գործին մի քահանայի և մի պարսնի ձեռքով բռնի կերպով ընտրված երկու պատգամաւորները... Ոչ, մենք համաձայն չենք «Кавказ» լրագրի մտքի հետ. մենք երբէք չէինք համաձայնվի մեր քուէտուվը դնել այնպիսի ընտրողական ժողովում, որտեղ տիրում է անիրաւութիւն, մենք վաւեր չէինք համարել այն երեք անձանց սպիտակ կամ սև քուէն, որոնք ընտրված են եղել ոչ թէ ծխականների մեծամասնութիւն կազմող 153 անձանց ձեռքով, այլ 18 մարդու ձեռքով: մենք չէինք ուզեալ պատգամաւոր ընտրվել մի ժողովի մէջ, որի ընտրողական ցուցակների մէջ ջնջված է մի ամբողջ հայոց եկեղեցին, չէինք համաձայնվի փառաբար կերպով դնալ Եջմիածին, տանելով մեզ հետ մի հայոց եկեղեցու հարիւրաւոր ծխականների անէծքը, թէ փառք վայելելու նպատակով մեզ այնքան է կուրացրել, որ մենք համաձայնվեցանք ընտրվել, անցնելով նոյն իսկ մի ամբողջ եկեղեցու ծխականների իրաւագուրդ մարմիններին վրայով... Թող այդ անն նրանք, որոնք եկեղեցու պաշտպաններ են հռչակում իրանց, իսկ մեզ համար, չը նայելով որ մենք յայտնի

ենք որպէս եկեղեցու քանդողներ, մեզ համար աւելի թանգ է եկեղեցու, ժողովրդի անբռնաբարելի իրաւունքների պաշտպանութիւնը, քան ամեն դնով, նոյն իսկ ամօթի զգացմունքը զոհելու դնով թեմական պատգամաւոր ընտրված լինելու փառքը: Մենք ստիպված ենք ներողամիտ լինել դէպի «Кавказ» լրագրի խմբագրի տարօրինակ մտքերը, որովհետեւ մեր շրջանում նոր մարզ լինելով, նա տեղեակ չէ թէ ինչ տեսակ ստոր և խարդախ կուսակցութեան հետ մենք գործ ունենք մեր հասարակաց կեանքի ամենօրեայ յարաբերութիւններում: Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՌՈՇՆԵՐ

«Նպատակն արդարացում է միջոցը»,—ասա «Արձագանքի» հաստատի հանգամանքը: Այսօր ձեռնառու է սակ, որ ամառն է ձին գալիս,—ասա: Վաղը անձնական շահը պահանջում է ցոյց տալ, որ երկիրը երկրի տակն է, միւս օրը հարկաւոր կը լինի իրան ասածը ուրախալ,—ուրացիր.—ասա «Արձագանքի» ղեկավարների դաւանանքը: Ինչպէս երևում է, «Արձագանքի» խմբագրութեան պատից կախված է մի տախտակ, հետեւեալ չորս պատուիրանքներով. 1) Մուտ խօսիր: 2) Ասածը ուրացիր: 3) Մեր Աստուածը—մեր շահն է: 4) «Արձագանքը»—մեր դիմանի: Այդ չորս պատուիրանքներով են ղեկավարվում «Արձագանքը» և դրան առաջին և վերջին աշխատակիցը: Փաստեր, որքան կամենաք: Թերթիցէք «Արձագանքի» համարները և նմուշներ շատ կը գտնուք: Մի գեղեցիկ օր «Արձագանքը» գրում է. «Մեզ

հարգում են, որ այս ինչ մարդը խելագարվել է»:

Միամիտ ընթերցողները հաւատում, ցաւում են: Անցնում է մի առ ժամանակ, և ամենքը տեսնում են, որ յիշեալ մարդը իսկի միտք էլ չէ ունեցել խելագարվելու և ողջ ու առողջ է:

Գաղտնիքը բացվում է: Յիշեալ մարդը «Արձագանքի» հակառակորդն է, և նրա խմբագրի բոլոր բարեմասնութիւններին ծանօթ: Եւ անհակառակորդին հարուածելու (խրկ թէ) համար, դիմում են կարճ միջոցի.—նա խելագարվել է, աւտում են:

Չէ որ «Արձագանքի» չորս պատուիրանքներից միւրը բարոյգում է՝ սուտ խօսիր:

Հարկաւոր է, դիցուք, միամիտների մտքերը պղտորել: Երկար չեն մտածում: Թխում են մի հնարած սուտ, և միւս օրը «Արձագանքը» լսու է սեւեւում այսպիսի մի լուրով.—«Վրաց «Ինքիւրա» լրագրին պ. Կոնստանտին Թէյտէր հարդարում է, որ Միտքը ներումն է չստրել այս ինչ յանցարք քահանային»:

Ինչ կապ կայ «Ինքիւրա», «Բէյաէր», «Միտք»,—նարցնում են միամիտները: Հը. հենց բանն էլ դրանումն է,—պատասխանում են եղովիտները:

Երկու օր յանցած ամեն ինչ բացվում է. բանից երևում է, որ «Ինքիւրա» մէջ իսկի Թէյտէրի անունի հոտն էլ չէ եղել: Բայց «Արձագանքը» ձեռնառու է համարել սուտ հարբէր: Եւ հնարել է: Բանտ իս չեն նստացրել,—մտածել է խմբագիրը: Չէ որ պատուիրան է՝ ասու խօսիր»:

Տարիներ, երկար տարիներ «Արձագանքը» մինչև անգամ նայել չէր ուղում մի մարդու, մի թերթի վրա: «Մենք մինչև անգամ զգում ենք նրա անունը սալ մեր էջերում», գրում էր «Արձագանքը», «մենք չենք կարող մեր ձեռքերով դիպել նոտած դիակին, որից զարչանալով ինչ է բուրում»:

Անցնում է մի սու ժամանակ: Հա՛նք պահանջ

համար գործերի մէջ, որոնք տիրում էին սկզբից ի վեր, անդ իրաւունք և աստուածացած իշխանութիւն էին կարծում: Ամեն ինչ ենթարկվել է ճշմարտութեան գործիքի մեղմ, բայց անողք հարուածներին: Այս, թէ և հրաշալի դասակարգում սպանութեան գործիք չէ, բայց ուղան ցաւ, որքան միմեզ է պատճառում այն կազմուածքին, որին նա պիտի ծառայէ անչէլ սիրով: Նա, այդ դասակարգ, առանց ցնցումների, առանց դողոցների, կորել է շատ հիւժվալից կազմեր, որոնք իւր էին մասնակալարում ճշմարտութիւն որոնող մարմին, հեռացրել է նրանից շատ աւելորդ կտորներ, առանց որոնց անհնարին էր թվում կեանքը, այնքան աւելորդութիւնը, սխալը պինդ կպել էր խտրութեան մինչև դանակի երևան գալը: Անողք, խտրաբարդ դանակ... Նա չը գիտէր, չը ինչպե՞ս նա ճշմարտութիւն պիտի ցոյց տար և արաւ այն բոլոր ցաւեցող անդամաստուծութիւնները, որոնք ճշմարտութիւնը պարզելու, պատճառը հասկացնելու համար այնքան հարկաւոր էին... Այսպէս գնաց և գնում է մարդկային մտքի առաջադիմութիւնը: Նրա քանդանքը այլ ևս չը պիտի երբէք կենդանանան, նա չէ ճանաչում մի ճանապարհ, որով հարաւոր լինի յետ ու յետ գնալ: Եւ մարդկութիւնը հեղուկ քար է ընկնում նրա ետևից. յետ մնալը, կանգնելը դերեղմանի փոս բաց կանէ նրա ոտների առաջ: Ժամանակի ողբն այդ է. հիմնական, ստանաւոր հետադարձութեան, պատճառի ուսումնասիրութեան դարը անջնջելի կնիք է դրել բոլոր այն գործերի վրա, որոնց տուած է զարգանալու, մի ծանալու խորհրդաւոր կոչումը: Եւ այդ կնիքը չէր կարող հեռու մնալ այդ գործերի մէջից, գոյցն ամենագեղեցիկից, այն է զրականութիւնից:

Գրականութիւնը, ժամանակակից դիտութեան քանձապահը, սուր դանակի շողոցների ասպարէզն է: Միտքը այդտեղ է գտնում իր մեծ ոյժը, այդտեղ է հրաշագործ ծաւալ ստանում: Գրականութեան այն սպասարկները, որոնք գործում են օր լրա առաջանալու, զարգանալու անչէլ սիրով, չեն կարող հրաշալի դանակի սպասարկները չը դառնալ: Հետադարձութիւնը—դրա վրա է հիմնվում հրապարակախօսը, որի սուր աչքի առաջ իբր երեւոյթը կազմարկվում է, մինչև հիւրը նորանում և ցոյց է տալիս իր լուսնադակութիւնը: Եւ եթէ այդպիսի պատուանդանի վրա կանգնած հրապարակախօսը ունի իր մէջ լուսաւոր մտքի մի ճառագայթ, ունի իր կրթելի տակ մի սխալ, որ բարի ցանկութիւնները, աղիւս գաղափարներից է բաբախում, նա երբէք չէ կարող նորից պնդանիլ ուսումնասիրած իբր, երեւոյթը նախկին կեղծի մէջ, առանց կսկծի թայտ տալ, որ այդ կեղծի մէջ նորից բայն դիւ հիւսուածու, արդէն փոտող կեանքը:—Դանակը ցոյց կը տայ պատճառը, կը բլբլբէ և կիմպնէ: Եւ կարող է ճշմարտութիւն իմացած աղիւս մարդը լեզուի վրա ծանր քար դնել, լեւ յանուն այն քաղցրութիւններին, որոնք ուղեկից են անթիւ դարբերել ի վեր, որոնք վաղուց դառնութիւն են դառել, դառնութիւն, որ միայն հասակի, երկարատեւութեան իրաւունքով է պահվում:

է հրաշագործ ծաւալ ստանում: Գրականութեան այն սպասարկները, որոնք գործում են օր լրա առաջանալու, զարգանալու անչէլ սիրով, չեն կարող հրաշալի դանակի սպասարկները չը դառնալ: Հետադարձութիւնը—դրա վրա է հիմնվում հրապարակախօսը, որի սուր աչքի առաջ իբր երեւոյթը կազմարկվում է, մինչև հիւրը նորանում և ցոյց է տալիս իր լուսնադակութիւնը: Եւ եթէ այդպիսի պատուանդանի վրա կանգնած հրապարակախօսը ունի իր մէջ լուսաւոր մտքի մի ճառագայթ, ունի իր կրթելի տակ մի սխալ, որ բարի ցանկութիւնները, աղիւս գաղափարներից է բաբախում, նա երբէք չէ կարող նորից պնդանիլ ուսումնասիրած իբր, երեւոյթը նախկին կեղծի մէջ, առանց կսկծի թայտ տալ, որ այդ կեղծի մէջ նորից բայն դիւ հիւսուածու, արդէն փոտող կեանքը:—Դանակը ցոյց կը տայ պատճառը, կը բլբլբէ և կիմպնէ: Եւ կարող է ճշմարտութիւն իմացած աղիւս մարդը լեզուի վրա ծանր քար դնել, լեւ յանուն այն քաղցրութիւններին, որոնք ուղեկից են անթիւ դարբերել ի վեր, որոնք վաղուց դառնութիւն են դառել, դառնութիւն, որ միայն հասակի, երկարատեւութեան իրաւունքով է պահվում:

Այդ պարզ ճշմարտութիւնները բղիւսում են այն մեծ ճշմարտութիւնից, որ ժամանակակից մարդու վրա ծանալացած չէ Պրոմէթէոսի ժամանակի առնչքը, այժմ, այս, մարդը չըլթալված չէ ահալին ժայռի վրա, այլ ձեռքին ունի գարծիք և ոչ թէ զէնք:

Ժամանակը իր պահանջի տէրն է: Պրոմէթէոսի ժամանակ, երբ դանակը միայն սպանութեան զէնք էր, իսկ միտքը երկաթի շղթաներով կաշկանդած, չէր կարող ծովը ժամանակակից փրկանական նատուրալիստ վրապարտողները ոչ մէկը: Նոյնպէս և այժմ, երբ դանակը դառել է խաղաղ և անվրդով հետադարձութեան գործիք, ինչպէս կը

պահանջէր, որ յայտնվին և ազդեցութիւն գործեն մտքերի վրա այնպիսի բանաստեղծներ, որոնք նման կը լինեն անարկուն ճարտարներին և նրանց պէս, որոնք ինչպէս սուտ է եղիչն «Երբեք չէր քաղցրութեամբն են արարում առանց կերակրի և կենդանի են միայն օդը ծծելով»: Անպայման հրաշալի են Դանտի «Աստուածային կատակերգութիւնը», Ֆլեմինգի «Տերտանքը», Միլտոնի «Կրակաբոյ» բայց ինչ անէք, երբ այժմ ամենքի ձեռքին տեսնում էք դերամատից կամ անգլիապոէ միտքաբան, դժուարամարտ, անպաճաճ վեպերը: Մարդկութիւնը դանակով է հետաքրքրվում, դանակ է տալիս իր ուշք ու միտքը, որովհետեւ դրանց մէջ է տեսնում ժամանակակից կեանքը, մարդ, մարդուն շրջապատող երեւոյթներ: Որոտում են դրանց մէջ ուսումնասիրութիւն, մարդկային միտքը տանջող հարցերից մէկը, պատկերի կատալոգ լուսարանութիւն, ժամանակակից իրէալ, մի խօսքով այնպիսի բաներ, որոնք այս կամ այն կերպ պիտի պատասխանեն մտքի հարցապիտուութեանը.—սու է ճշմարտութիւնը, ինչ է նա, որ խորում է թաղված, ինչից և ինչու է արդէն: Հոգեթիթիւ հարցեր, որոնք միշտ դանակի տակ մտնել են ձգտում:

Ուրեմն դրակութիւնը բնական է: Եթէ մարդկութիւնը ժամանակի պահանջը պիտի լրացնէ, եթէ գործը առաջանում է տիրող դրակութիւնից—ինչ զարեմատու բան ունենք: Մէկը հասկանում է այնպէս, որ պիտի ներկայացնէ կեանքը իր իրական դրակութեան մէջ, ամեն կողմից մերկացրած և գրում է «Թակաբոյ», «Նանա», «Մարդ-գազան», միւսը կարծում է թէ ժամանակակից կեանքի երեւոյթները պէտք է պարզաբանել հոգեբանական տեսակետից, իսկ մի ուրիշը հաստատացած է որ իրողութիւնները պէտք է լուսաւորել ժամանակակից կապից իրէալների լրջով: Կարող ենք չը հասկանել մէկի կամ միւսի ուղղութիւնը, բայց չենք

Չում է միանալ այդ «գարեհիլի» և այդ «հոտած դիակի» հետ: Անիծեալ շահ, որ կապում է մարդկանց աչքերը և մոռացնում անցեալը...

Եւ անա մի գեղեցիկ օր, «Արձագանքն» իր գեղեցիկ գրկած երեկոյան դիակը սիրոյ և միութեան համբոյրներ է տալիս...

Նայողները զգում և զգրմանում են: Չգուանքից թքում են:

Սակայն ինչ փոթ: Այդպէս է պահանջում շահը: Զէ որ պատուիրանքում ստած է՝ «ստածող ուրացիր»:

Մի քանի րօպէտ մարդկանց հարկաւոր է խաբել, և յուսանաւ կողմնակիցներին սիրտ տալ: Թանաք կայ, թուղթ կայ: Անա լուրը պատրաստ է: «Արձագանքը» տպում է:

«Էջմիածնից հարդուում են, որ սրբազան սինոդը մարտի 8-ի ընտրութեան դէմ եղած բողոքները անհետանք է թողել, մեծամասնութեամբ չորս ձայնի ընդդէմ երկուսի»:

«Արձագանքը» ստախօսութեան ճանաչողները կարդում են և ժպտալով ասում. «Արձագանքը» պղտոր ստերիցն է: Եւ յիշուի: Էջմիածնից հետագիր է գալիս, որ գործը դեռ չէ էլ քննված: «Այլ այդքան էլ սուտ, բացակասում է միամիտ ընթերցողը. հէրիք չէ, որ գրում են, թէ բողոքը անհետանք է մնացել, մինչև անգամ ասում էլ են, թէ քանի ձայնով քանիսի դէմ»:

—Այլ սա ինչ լրագիր է: Այսպէս էլ խայտառակութիւն կը լինի:

Սակայն ինչ փոթ, այդ էր պահանջում շահը: Լոյս է տեսնում «Արձագանքը».

յօդուածները ետեւից քարոզում են կարգապահութիւն, իշխանութիւն ճանաչել, համեստ լինել: Շատ լաւ:

Բայց չէ որ պատուիրանքում ստած է՝ «Արձագանքը»—մեր դիմակն է:

Եւ գիտէք դիմակի տակ ինչիս են կատարում. «իշխանութիւն ճանաչել» քարոզողը՝ պաշտօնական ժողովում բացակասում է. «Եւ իշխանութիւն չեմ ճանաչում, ես տեղակալ չեմ ճանաչում»:

Այլ և ձախ կրկնում են. «Ես այդպէս եմ ուզում: Ոչ ոք իմ գործերի մէջ խառնվելու իրաւունք չունի: Ես ոչքի չեմ լսի և չեմ հնազանդվի»:

Միս օրը լոյս է տեսնում «Արձագանքը» այսպիսի սողերով. ճառ ճանաչում է սինոդի իշխանութիւնը և թոյլ չի տայ ոչ զքեզ իր վրա անհնազանդութիւն և անարատ բարձել:

Աֆֆերիս: Անհնազանդութիւն անել, իշխանութիւնը ուրանալ, որ ամենքը մի և նոյն նպատակին են ծառայում—ուսումնասիրել ժամանակակից կեանքը, վերլուծել երեւոյթները և յանձնել այդ բոլորը մարդու հարգասիրութեանը: Կուք չեք կարող ուրանալ որ այդ բոլորն անելու համար տաղանդ է հարկաւոր:

Յայտնի օրէնքների աղբյուրութիւնից ստաջացող իրերի ընթացքը, սակայն, միայն բնական չէ համարվում բոլոր մարդկանց կողմից: Ճամանակի պահանջի շուրջը խմբում են և այնպիսիները, որոնք խրատների և պայմանների արագին քանակութիւն են բարձր և պարզ երեւոյթների վրա: Նրանք սարսափով են տեսնում ստաջադիւնութեան, հոգեկան վերանորոգութեան հսկայական քայլերը և ճիշդ են թափում պահպանողական մի պատեղ ստեղծել հոսանքին դիմադրելու համար: Այդպիսիները ամեն տեղ և ամեն ազգի մէջ կան և նրանց ձայնը ամեն տեղ համարեա միատեսակ է: Յետամնաց մըրցողների այդ դասը կայանալով է վախից, որ բռնացած է նրա մտքի և գործերի վրա. համբերող հողի չը կայ, զանգատի ու միմուռնի մէջ է լսեցնում իր ձայնը ամեն քայլում, ամեն դէպքում:

Տեսնում է խրատների և պայմանների մարդը, որ վրայագրութիւնը ժամանակի ընթանակը, վերլուծող պահանջին է կենտրոնանում և նա սկսում է գոռալ. «օգնութիւն, հարկները վտանգի մէջ է»: Լսում էք նրան. նա փրկուող բերանին փաստաբանում է, հաւատացնում: Ֆրանսիական գրակապութեան մէջ, ասում է նա, նատուրալիստական ուղղութիւնը ներքի է, քանի որ այդ գրականութիւնն ունի անցեալ, ունի իր ետեւում աստիճանաբար զարգացման բոլոր շրջանները: Այդպիսի կանոնաւոր հասակի նայ մարդուն ներքի է գուարձութիւնը: Բայց հայ գրականութիւնը—լաւ լսեցեք—չը պիտի հետևի մերկացնող վերլուծող ուղղութեան, քանի որ նա նոր է ծաղկում: Դուք ստաջ մեզ տուէք նախկին ուղղութիւնները,

թեան դէմ բնորոտանալը՝ ոչինչ, կարելի է: Գաղտնի ամեն բան ներքի է: Բայց երբ այդ բնորոտութիւնը և անհնազանդութիւնն աչքը կը կտնեն, իսկոյն, իբրև Աստուծոյ գաւառներ՝ կը դրնեն: Ընա լսում է իր իշխանութեան, նա թոյլ չի տայ ոչ զքեզ իր վրա անհնազանդութեան արտո բարձել:

Ներքի է այդ տեսակ վարմունքը: Բայց ինչ ենք ասում, չէ որ «Արձագանքը»—միայն դիմակ է:

Բայց սին ասե՛ք, որը խոտորվանքը: Անթիւ և անհամար են «Արձագանքը» աչքակապութիւնները: Երեկոյան Նիւսալի տեսուչը՝ այսօր դառնում է վնասակար, զպրոցակործան, որովհետև «Արձագանքը» բարեկամների անամօթութիւնը իրանց երեսներով է տալիս: Այնպէս ստաջանական, փորձված բժիշկը այսօր դառնում է սպէս, որովհետև «Արձագանքը» ինտրիգները բաց է անում: Երեկոյան Նիւսալի, տարրաւոր, փայլուն հոգեբանները այսօր դառնում է անընդունակ, քննադատ, որովհետև նա իր սենտակից վրեժից այն մարդկանց, որոնց նշանաբանն է՝ «սուտ խոսել, ասածն ուրանալ, հասարակութիւնը խաբել»:

Ե՛հ, որ մէկը թէնք, որ մէկն ստաջ բերնը: Կա մի անվերջանալի շղթայ է, որի ամեն մի օղակի մէջ ինչ ասե՛ք կայ, բայց ճշմարտութիւն, չխաղաղութիւն, անհնազանդութիւն...

Մեղաւոր է միթէ հայոց հասարակութիւնը, որ «Արձագանքը» անելով հասկանում է մի մեծ աչքակապութիւն:

Մեղաւոր է միթէ հայոց հասարակութիւնը, որ այդ տեսակ թերթին հազիւ 200 ընթերցող է տալիս:

Մեղաւոր կը լինի միթէ հասարակութիւնը, որ կի՛մ վաղն «Արձագանքը» գրի թէ՛ «ստաջաւոր արեգակը ծագում է», էլի չի հաւատայ, կը կասկածէ, թէ այդտեղ էլ մի խորամանկութիւն կայ...

Սակայն ուրիշ կերպ լինել էլ չէ կարող: Ներդրութիւն մեր միամտութեան համար:

Այլ ուրիշ ինչ կարող է լինել այն «Արձագանքը», որ պ. պ. Յովհաննիսեանի և Եւանդուկանի արձագանքը է:

ԹԱՏՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Մարտի 22-ին, կիրակի օր հրատարակւած է թատրոնական ժողով հայոց Կրթամտական ընկերութեան կանոնադրութեան զօրութեամբ: Լրագիրը

սպա թոյլ տուէք ձեզ զուարճանալ այժմեան ուղղութեամբ:

Կատարեցէք այդ պահանջը, թէ կարող էք: Յետ դարձե՛ք ձեր սայլի անխնայը, անցե՛ք անազն տարածութիւններ, սկզբից սկսեցէք: Այդ է ամեն մի դէպքում «օգնութիւն» կանչողների «հաւատաբար»: Պէտք է կատարել անթիւ պահանջների մի շարք, պէտք է, Աստուած դիտել, թէ ինչ անհարկն, աներկակայի թուլչնքները գործել, դարեր յետ կանչել, մտնել նրանց ծոցը, փոսած ոսկորներ յարուցանել, միմուռնի ստեղծել, իրացնել ժամանակի հողին, սկսել գործը, առաջ գալ կանայ կամայ, որպէս զի խրատների և պայմանների մարդը սարթնութեան որ և է նշույլ չը տեսնէ գործի մէջ: Եւ այն ժամանակ միայն նա թոյլ կը տայ մեր այժմեան ժամանակի ուղղութիւնը իրեն կարելի դուարձութիւն: Այժմեան ուղղութիւնը, ուրեմն, հիւնը չունի, հասարակական երեւոյթ չէ, այլ մի դէպքում է, որ տրվում է լաւ քէֆ արած, լաւ ժամանակ անցկացրած մարդուն: Եւ այդպիսի հայեցակէտը կարող է դառնալ դաւանական սկզբունք, ընկալատութեան կրկնութիւնը...

Այդ լոզիկայից դուրս բերած յուսանախցիկով փրկաօգնութիւնը ամեն մի հարցում, ամեն մի դէպքում է առաջ քաշվում: Կուք ուրեցեք մի բան ընդունել, որ այս ինչ առաջադէմ, քայլարակիկով ազգի լուսաւորութեան լաւ գործերից մէկն է, ձեր օձիքը բռնում են և ասում. ոչ զքեզ դիմացե՛ք, մարդ դարձե՛ք այնպէս, ինչպէս այդ գործի տէր այդն է մարդ դարձել և սպա թոյլ տուէք ձեզ մի այդպիսի շուրջութիւն: Կարծի էք չափել, թէ որքան անկարողութիւն, անանկութիւն կայ այդ մտքի մէջ: Եւ երբ այդպիսի միտքը երեսի վրա է մտնում, իբրև մի անհարկն բան, լսվում է յուսահատ աղաղակ. «օգնութիւն, հարկները վտանգի մէջ է»:

Ներքի մէջ այդ մասին առանձին յայտարարութիւններ չեն տպագրվում, այնպէս որ հաստատ չը գիտենք արդեօք այդ ժողովը, որի մասին լուր միայն կայ, կը կայանայ թէ ոչ:

Այսպէս թէ այնպէս, մենք անկարող ենք մի նկատողութիւն չանել այդ առիթով:

Ինչպէս յայտնի է 1891—92 թ.ի թատրոնի ծախսը հողաց ինչն հասարակութիւնը: Անցեալ տարի թիֆլիսի Կրթամտական ակումբի հովանաւորութեան ներքոյ ժողով հրատարակեց ժողովարանի դաճիւնում: Ժողովին մասնակցել կարող էր ամեն մի հայ, որը հետաքրքրված է թատրոնի գործով:

Հասարակութիւնը հանկրտութեամբ վերաբերվեց: Վճարեց ստորագրութիւն բանալ և մի գուժար հաւաքել, մօտ 2000 կամ 2500 լուրով: Այսպէս հասարակութիւնը ժողով գումարելով՝ իրանից և իր ձեռքով ընտրեց մի թատրոնական մասնաժողով, որը պէտք է հասարակութեան նախաւորութիւններով ղեկավարել հայոց ներկայացումները 1891—92 սեզօնի ընթացքում:

Մեղծը վերջացաւ Գեֆիլտը ծածկելու համար մի պարահանդէս կազմելու: Հասարակութիւնը սիրով վերաբերվեց: Եւ անա այժմ, ինչպէս հասարակութիւնն էլ իրաւացի կերպով սպասում էր, թատրոնական մասնաժողովը հաշիւ պէտք է տայ իր արածի և գործունէութեան մասին:

Կա գումարանքի արժանի և մի և նոյն ժամանակ պարտաւորացողը մի քայլ է այն մարդկանց կողմից, որոնց հասարակութիւնը պատիւ է արել յանձնելու թատրոնի գործը:

Այդ կողմից ստաջին ժողովը շատ կարեւոր է: Հասարակութիւնը պէտք է տեսնի թէ ինչ է եղել, ինչ է մնացել, ինչ է ծախվել, և ինչպէս է դուրս կատարվել:

Սակայն մի անհասկանալի կէտ, որի առիթով էլ պիտի լինի մեր նկատողութիւնը: Յայտնվում է, որ ժողովին մասնակցել կարող են նրանք, որոնք 10 լուրով կը վճարեն: Ինչու, հարցնում ենք: Ինչ հիման վրա, և ով է դրա կարգադրողը: Կրթամտական ակումբն ունի իր կանոնադրութիւնը, որի հիման վրա անպակաս պէտք է վճարել ոչ թէ 10 լուրով, այլ որքան իշում ենք, 25 թէ 50 լուրով: Ուրեմն այս 10 լուրով վճարը դուրս է Ակումբի կանոնադրութիւնից:

Արդ, ինչ հիման վրա և ինչ վճարով 10 լուրով պէտք է վճարել այն ժողովին մասնակցելու համար, որին հասարակութիւնը կատարեալ իրաւունք ունի մասնակցելու, որի կազմում էլ, նպատակ

տուողն էլ, փող հանգանակողն էլ եղել է ինքը հասարակութիւնը:

Ուրեմն կրկնում ենք, ով է իրան ձեռնհաս համարել 10 լուրով անդամակցար նշանակելու և այդպիսով արդիւլու հասարակութեանը ժողով մտնելու:

Սա մի մեծ թիրիմացութիւն, մի անտեղի կարգադրութիւն է, որը պէտք է անմիջապէս վերացնել: Հասարակութիւնից փող է հաւաքված թատրոն պահելու համար: Հասարակութիւնը հողացել է ղեկից: Հասարակութիւնը ինչն ընտրել և նշանակել է գործի ղեկավարներին.— և այդ հասարակութիւնը, առանց սահմանափակումների, իրաւունք ունի դաւալ և իմանալու, թէ ինչպէս են գործածել իր նուէրները:

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՎՈՒԳՅՈՒՅ

Մարտի 8-ին Մեղաւոր ենք մեզ համարում «Մշակի» ընթերցողների առաջ, որ մինչև այսօր չը կարողացանք ծանօթանալ նրանց Ս. Պետերբուրգում հաստատարվող «Вестникъ Виноградъ» ամսագրի հետ, որի արդէն կարգը (մարտի) համարը այժմ լոյս տեսաւ: Արժէ և պէտք է լսուել այս պատուական ձեռնարկութեան մասին, որը մի ուղափառի կերպով է կարծում մասնագիտական գրադատութեան մէջ:

Ամսագրի արտաքին գեղեցիկ տեսքը, նորա մէջ դետիլված նուրբ և մտայնի նկարները ներդաշնակվում են ներքին բազմաանակ բովանդակութեանը և ողջ միասին գործում է գիտնական հրատարակութեան տպաւորութիւն:

Ռուս և արտասահմանի մասուլի մէջ արդէն տարի են համակրական յօդուածներ այս ամսագրի վերաբերմամբ: Միտում է միայն արտաքին, որ այս հրատարակութեան մասին մեր հայ հասարակութիւնը բնաւ սեղեկութիւն չունի և չը պիտի անգամ թէ նրա գլխաւոր ղեկավարը մի հայ երկրատեսարէ մասնագէտ գիտնական է:

Ամսագրի յիշեալ երեք գրքայիններում ապված են մի շարք յօդուածներ, որոնք լուրս կան և պարզ գիտնական գրուածքներ, հետազոտութիւններ, և գործնական խորհուրդներ, բնչպէսներ և այլն:

Ամենից շատ յօդուածներ պատկանում են խմբարկի պ. Բարսեղ Փայրեանցի գրչին: Հետաքրքրելի է նրա տեսութիւնը «գիտնագրութեան ներկայ դրութիւնը Ռուսաստանում» և նրան զարգացնելու միջոցները» և ակադեմիկոս Կոպալեվի գրչի գրված ընդարձակ գիտնական հետազոտու-

ցաւ իրողութեան առաջ: Անպատրաստ ժողովուրդը իւրացրեց մեծ խնամք, մարդասէր բարեխառնակները, խաղաղութեամբ սկսեց ստաջ գնալ այն զարկից, որ տուել էր ազատապար իշխանութիւնը և այժմ էլ նա անվերջ վայելում է այդ բոլոր բարեքները, որոնցից նրա կեանքն աւելի լաւացել է և դեռ պիտի լաւանայ: Այն ժամանակվա ոգևորված պահպանողականները այժմ իրանց յայտնած անբնական անգամ խաւարմիտ են երևում, իսկ աղատաբան սերունդը պարծնում է այն ժամանակվայ ազատամարտ գործիչների անուններով: Պատմութիւնը կրկն կողմերի խօսքերը, գործերը անկազմապահութեամբ ծրարել է, դրել իր ծոցում և այժմ էլ սրանից յետոյ էլ պիտի նկարել խաւարի և լոյսի մրցութիւնը:

Ան պատմութեան տուած փաստը, միթէ կասկած, կրտստ միտք է մնում դրանից յետոյ:

«Ես քեզ կը տամ մի գանակ... Կա սպանութեան գնեց չէ...»: Յիշեցե՛ք այդ խօսքերը, որոնք կրկնային պատգամի ձևի մէջ են գրված: Մեր ժամանակը այդ սրանչիլ գործիքի ժամանակն է:

Եւ նա գրել է մեզ... Մենք տեսնում ենք նրա գործերը, շատ դէպքերում սարսափում ենք նրա պարզած գրութիւններից, բայց բողոքելու իրաւունք չունենք: Մեզ ցաւ էր պատճառէ նա, մեր մէջ մտքը կը տարածէ նա և մենք լուս ու մտնել պիտի պարզ պիտի ուսումնասիրենք: Կամենում էք իմանալ գանակի գործիւնը.— Բաց արե՛ք ուս գրականութեան ժամանակակից կենդանի հակա սիւնի, կամ Լ և Տօլստոյի «Կրեյցերեան Մօնոյրը»: Մենք քեզ կը լսուենք դա մասին:

*) Гр. Джаншьеъ. «Изъ эпохи великихъ реформъ». Москва, 1892 г. Գրին է 1 լուրով, ծախվում է սովխանքի օրով:

«... Մի և նոյն է, դուք ինձ չէք հաւատարմաց...»

Թիֆլիսցիներն ծանօթ տիկին Աննա Թիֆլիսցի ապա իր կենցեղանքը և ապա Ռուսաստանի Պաշտպանության նախարարին և նրան զբոսաշրջության համար...

Այս օրերս ըստ է սեռի պ. Ռեդլայի (Paul de Rédla) մի նոր գիրք «Les bas-fonds de Constantinople» վերնագրով...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 18 մարտի: Անարիտա Րավաչոյ՝ որը համարվում է պայթիչների գլխավոր պատճառը, այսօր առաւօտեան դէմ ձերբակալվեց:

Ընկերակցությունները, նա սկսեց պնդել թէ ինքը Րավաչոյ չէ, բայց հաստատվեց որ նա է: Այսօր առաւօտ ստորագրվեց այն վճիռը, որը վերաբերում է զերմանացի, բեղիկացի, առարկացի չվեչարացի և խալապի 40 անարիտաների աք-սորման:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Մարտի 14-ից մինչև 17-ը առանձին մասնատույնը ստացել է անելի քան 27.000 ռուբլի, ի միջի այլոց անելի քան 10.000 ռ. Տուրայի հողային բանկին:—Гражданские права...

ՊԱՐԻՉ, 19 մարտի: Րավաչոյ խոստովանեց, որ ինքը իրաւի Րավաչոյն է: Սեն-Մանդելյում երգած նրա ընկերակցանքը խուզարկելով գտան քի-միական նիւթեր, բոլոր նշանները ապացուցա-նում են, որ կլինի փողոցի պայթիչներ ստալ է ընկերակցությունները ինքն ինքն է Սեն-Մանդելյում ընկերակցության պայթիչներ պատճառը: Րավաչո-ւն հարևաններից մինը սեռել է, թէ ինչպէս կլինի փողոցի վրա սեղի ունեցած պայթիչներ որը նա ուղարկեց Պարիզ մի պայտասով:

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ ամսին 22-ին, երեկոյան ժամի 7-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի գահինում նշանակված է կովկասի Հայոց ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԵԹԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ Ժողով:

- Պարապմունքի առարկաները: 1) Տեղական վարչակազմների նախահարկերի քննությունը և հաստատությունները: 2) Խորհրդի առաջարկությունները, ա. զիւանի ծախսի վրա աւելացնել 300 ռուբլի, բ. զիւանի նոր կազմակերպություն համար թոյլատրել խորհրդին վարձել յարմարաւոր բնակարան կամ գնել տուն: (№ 32) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՑԵՍԻՍՆԱԼ ԱՐՀԵՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ:

- 1) Հանդիմանների և սպիտակիզների ձեռի դասերի Գլխավորի մեթոդով և Շեյքերի փրանսիական մեթոդով: 2) Կարի դասեր մոզային ժուրնալներով: 3) Հարվակարի և կանաչան ձեռագործերի դասեր: 4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար: Վաւրը ամսական 2 ռուբլի, երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյան: Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ընդ: (№ 23) 11—40

НѢМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMIECKI, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ՝ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ ԱՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոսրեր, որոնց սարք ու կարգը ամենապարզ արտասահման հիւրանոցների սենյակներին է նման: Նոսրերի զինքը 50 կոպեկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, օրակց ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Կար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ընթացք, տեղեփոս, քաղցրեղենների խանութ, բաղնիքներ: Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում: (№ 21) 7—130 (2)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ,

համաձայն 22 անցեալ փետրվարի իր վճիռի, կանչում է հաճախորդներին զայլված՝ 1) Մկրտիչ Վարդանյանին, 2) Խաչատուր Սիմոնյանին, 3) Մեղքոն Յոզհանյանին, 4) Մարգար Ստեփանյանին, 5) Աբրահամ Յակոբյանին, և 6) Կարապետ Մկրտչյանին, որոնք ընդունված են քաղաքային հասարակության մեջ, բերդի հարստացման կողմում աների շինություններ աները բաժանելու համար, նախազուգուցելով նրանց, որ յայտարարած օրից մինչև ՎԵՑ ԱՄԻՍ չեկողները կարող են զրկվել աների շինությունների անդ ստանալուց: (№ 32) 1—3

Մ. Ի. ՄԱՆԴԸԼ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ

ԳՈՒՍՏԱՎԱՆԻ ՊՐՕՍԿԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՒՄՆԱՅՈՒՄ

Մասկվայի առևտրական տունը պատիւ ունի ծանուցանելու յարգելի հասարակությանը, որ ստացված է մեծ քանակությամբ գնանական տեսակ գարնան և ամառային իր սեփական գործարանում պատրաստած, տղամարդկանց և երեխայոց շորեր ամենավերջին ձևերի: Վաճառումը գործարանի գներով է, առանց սակարկության (без запроса). Բոլոր ապրանքների գները զրկված են թերթիկների վրա և ոչինչ փոփոխություն չի կրի:

ՄՕՍԿՎԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՍՏԱՐԱՐՄԱՏԱՐ՝ Մ. Ռ. ԴՈՎԼԻՍԹԵԱՆ 1—5 (№ 32)

Խնդրում եմ յարգելի հասարակության, դէժ փորձի համար, փորձել իմ ԿԱԽԵՎԻՐԻ ԳԻՆԻՆՆԵՐԸ, որոնք վաճառվում են նորերս բացված պահեստում, Վարձուցովի Նաբերեժնայա փողոց, սեփական շինությունների մեջ: Այլ գինիները յատկություններ և արժանաւորություններով աւելի լաւ են քան Թիֆլիսում վաճառվող շատ ուրիշ գինիները: Խնդրում եմ համեմատել իմ՝ շիշը 15 կոպեկանոց գինիին ուրիշներին՝ շիշը 25 կոպեկանոց գինիներին հետ, նոյնպէս և միւս տեսակի իմ գինիները, մինչև 60 կոպեկանոցը, ուրիշների 1 ռուբլիանոց գինիներին հետ: Կարելի է ձեռք բերել մեր գինիները աւելի էժան քան ուրիշների մոտ:

Մտնում եմ յարգանքով՝ Փարնաուզ Ստեփանյանիչ ԻՍՍԱՐԼՈՎ, 1—3 (ե. հ.) (№ 32)

ԿԱՇՈՒՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍԻՄ

Ա. ԶԱՐԳԱՐԵԱՆՅ, Փ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՅ ԵՒ ԸՆԿ. պատրաստում է

ՊՈԼՈՒՎԱԼ, ՍՏԵԼԿԱ, ՊՍԴՕՇ և ն ա ի ը տ ե ս ա կ ն ե ը ի թ Պայմանների մասին դիմել գործարանը ԵՐԵՒԱՆԵԱՆ ՇՕՍԻԻ վրա, զաստապի մոտ: (№ 32) 1—10 (ե. շ.)

Ս. Տ. Մ. Ս. Ռ. Յ. Ն. Յ. ՕՐԲԵԼԻ

Սոջոլակիայ փողոց, սեփական տանը №№ 15—16 ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԳՆԵՐԻՆ Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյան 4 ժամից մինչև 6 ժ. Կիրակի և տոն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: (№ 145) 30—150

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական գասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համարու ՄԱՏՁԵԼԻ ԶՈՒՆԱՐԿ առևտրական հաշարարու-թիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար: Ս. ՄԱՆՈՒԼԵԱՆԻ ԶԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Տօղաների լիակատար աղիւսակներով 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/0-ից մինչև 120/0 վաճառվում է եղբայր Մովսիսյանի բանկային գրասենյակում և ներկայի մօտ. Тифлисть, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցեով՝ С. П. Мануэлянци. Կինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին դիմում կը լինի: 81—150 (91—№ 95)

Կ Ա Խ Ե Թ Ո Ւ Գ Ի Ն Ի

ՊԱՀԵՏԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ՝ Սոջոլակի, Սերգիեվկի և Սոջոլակի փողոցների անկիւ-նում, ա. Միրզոբիլի: ՇԵՇԵՐՈՎ 20 կոպեկից մինչև 1 ռուբլի 50 կ., ՎԵՐԻՐՆԵՐՈՎ աւելի էժան: ԸՆԴՈՒՆՎՈՒՄ են պատուէրներ օտարաքաղաքացիներին. պատուէրները կատարվում են շուտ և ձիշղ կերպով: (№ 19) 7—10 (2. հ.)

Մեծ չերամպանական հաստատություններ ՄՕՍԻՖԱՍՍ ասված տեղում, ԿՕՍՒԿԱ կղզու Ֆրանսիայում) ԱՆՈՒՅԻ ԵՒ ԸՆԿ.

Խմբարար խնդրում է չերամպանական յարգելի առնողներին դիմել ԿՈՎԿԱՍՏԱՆ ԳԻՒՎԱՏՆԵՍՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ, կամ Թիֆլիսի չերամպանական կայարանը: Մեծ քանակությամբ առնողները թող բարիհաճեն դիմել կովկասեան Գիւղատնտեսական ընկերության անդամ պ. Վ. Ա. ՍՈՒԼԻՍՏՈՎԻՆ, Թիֆլիսում, Կոկիա, Նիկոլայեվսկայա փողոց, տուն № 39: Պ. Ալիբի սերմերը ծախվում են 1, 3, 5 և 10 զոյտանի կլուղ արկներում, հաշվով իւրաքանչիւր զոյտանի 60 կոպեկով: Սերմի լուսավորման երաշխաւորութիւն կարող է լինել այն, որ ինքն պ. Ալիբի վարձատրված է պատուաւր դիմումով և ցելուկը սերմի պաշտօնական հայտարարվում է թուրքեստան երկրում: 12—17 (2.) (№ 140) Ե. ԱՆՈՒՅԻ